ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան 31-ը մայիսի 2022թ.

2022թ. մայիսի 31-ին, ժամը 15:00-ին Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի կողմից Ախուրյանի համայնքապետարանի համագործակցությամբ իրականացվող «Ուժեղ ՔՀԿ-ներ և տեղական գործընկերություն հանուն հաշվետու համայնքների և ներառական սոցիալական պաշտպանության Հայաստանում» ծրագրի շրջանակներում Ախուրյան համայնքում ձևավորված միջոլորտային համագործակցության ցանցի անդամների կողմից համայնքի սոցիալական կարիքների հիման վրա պատրաստված համայնքի տեղական սոցիալական պլանի հանրային լսում:

Մասնակցում էին՝

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արտաշես Տոռոզյանը, Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանը, բնակավայրերի վարչական ղեկավարները, <<Վորդ Վիժն>> ՀԿ-ի,<<Բարության խորհրդանիշ>> և <<ՊԱՆԴՈ>> ՀՋՀԿ-ների նեկայացուցիչներ, Մարմաշենի հոգևոր հովիվը, ավագանու անդամներ և նրանց ներկայացուցիչները, Միասնական սոցիալական ծառայության Ախուրյանի տարածքային կենտրոնի աշխատակիցները, Ախուրյանի համայնքապետարանի տարբեր բաժինների աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Լսեցին համայնքի ղեկավար Ա. Իգիթյանին, ով ներկայացրեց հանրային լսման նպատակը, լսմանը մասնակցող կողմերին և շնորհակալություն հայտնեց կատարված աշխատանքների համար: Լսեցին նաև <<ԳՈՒՄ>> ՀԿ-ի գործադիր տնօրեն Ա. Տոռոզյանին, ով նշեց, որ Ախուրյան համայնքում ձևավորված միջոլորտային համագործակցության ցանցի անդամների կողմից համայնքի սոցիալական կարիքների

հիման վրա պատրաստվել է համայնքի տեղական սոցիալական պլանը, ըստ այդ կազմվել և մշակվել են ծրագրային չորս առաջարկներ, որոնցից մեկն այսօրվա հանրային լսման արդյունքում կհամարվի առաջնային համայնքի համար և կյանքի կկոչվի առաջիկայում: Այնուհետև լսեցին <<ԳՈՒՄ>> ՀԿ-ի աշխատակցին, ով ներկայացրեց միջոլորտային հանձնաժողովի ներկա անդամներին:

Աշխատանքային խմբի չորս ներկայացուցիչ ելույթ ունեցան՝ առանձին-առանձին ներկայացնելով համայնքի սոցիալական կարիքների ուսումնասիրման ու գնահատման արդյունքում մշակված չորս ծրագրային առաջարկները՝

1. <<Ոչ ֆորմալ կրթական ծառայություններ Ախուրյան խոշորացված 3 բնակավայրերի 6-18 տարեկան երեխաների համար>>:
2. <<Գյուղատնտեսության և բիզնեսի աջակցության խորհրդատվական ծառայություններ>>:
3. <<Տարեցների համար հասանելի սոցիալական ծառայություններ>>:
4. <<Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կենտրոն>>:

Հանրային լսման ընթացքում տեղի ունեցավ նաև հարց ու պատասխան, որի ընթացքում հանրային լսման մասնակիցները ստացան ծրագրային առաջարկների հետ կապված իրենց հուզող հարցերի պատասխանները:

Համայնքի ղեկավար՝ Ա. Իգիթյան

Արձանագրող՝ Ա. Ոսկանյան